



ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. տես էջ 340)

Ը

Տրդատ եւ Գրիգոր.

ՍՐՔԱՆ նախախնամական և զարմանալի երեւցաւ ծագումն լուսոյ կրօնից յաշխարհս մեր, եթէ ի սկզբան մարդկութեան և եթէ ի սկզբան քրիստոնէութեան, կրքնամբ ըռել՝ թէ այլ աւելի, գոնէ՛ զգալի և բացայայտ եղաւ ընդհանուր ծաւալումն քրիստոնէութեան յընդհանրութեան ազգիս, որպիսի թերեւս չէ եղած յայլ ազգս. վասն որոյ և իրուամբ այս նոր քարոզիչ և առաքեալն Հայոց՝ կոչուի Լուսաւորիչ։ Միանգամայն և շատ սքանչելի համբամանօք եղած է այս Լուսաւորութիւնս. թէ քաղաքական տեսութեամբ և թէ կրօնական. և հարկ էր որ այսպէս ըլլար՝ երբ ողջոյն ազգ մի կրօնափոխ կ'ըլլայ կարճ ժամանակի մէջ. մանաւանդ այնպիսի պնդակարծիք ազգ մի՛ ինչպէս Հայոցս. զորս՝ շարժելու և հնաւանդ կրօնքէն ի նորն փոխելու համար՝ (մարդկօրէն խօսելով) արտաքին մղող ոյժ մ'այլ պէտք էր։ Այս ոյժն էր հսկայակերպ Տրդատայ հզօր բաղուն, Գրիգորի կակուղ ձեռաց աջակցեալ. բայց և Տրդատայ և հասարակաց յովղութեան՝ ուրիշ արտաքին նպատտ մի կար, զոր քաղաքական տեսութիւն կոչեցի. և հարկ է բացատրել։

Հայոց բարեկարգ կամ կանոնաւոր ազգ և տէրութիւն մի դառնալէն վերջ՝ թագաւորութեամբ Արշակունեաց, 400 և աւելի տարիս անցեր էր՝ մինչեւ ի սկիզբն երեւնալու Տրդատայ ի պատմութեան. այս չորս դարուց մէջ՝ թէ և երբեմն երկու համացիղ տէրու-

թիւնք՝ Հայք և Պարթևք՝ զժտութիւն կ'ունենային, այլ աւելի երկար ատեն բարեկամութեամբ և խնամութեամբ վարուէին. Հռովմայեցոց անյազ աշխարհակալութիւնն և մասամբ աշխարհաւերութիւնն էր շատ հեղ երկպառակութիւն ձգող և տակն ու վրայ ընող զերկիրս և զժողովուրդս. ինչ որ ի Հայս և ի Պարթևս ըրին նոքս այդ երեք կամ չորս դարուց միջոց՝ ծանօթ է ամենուն, եւս առաւել մեզ, ինչ որ մեր աշխարհակալ Տիգրանայ և Միհրդատայ օրերէն մինչեւ ի Վուրարայ և Խոսրովու օրերն՝ ըրին. երբեմն պատերազմով երբեմն հաշտութեամբ ընդ Հայոց, քիչ կամ շատ ազատ թողլով զմերս։ Երրորդ դարուն վերջերք և յատկապէս Գիւղիղտիանոսի կայսերութեան ատեն (284-305-11), փոխուեցաւ իրենց աշխարհավարութեան կերպըն. փոխանակ մէկ կայսեր միահեծան հրամանատուութեան, երկու երեք և չորք միաժամանակ կայսերք կամ կեսարք և օգոստոսք երեւցան, և իրենց տիգրեթածաւալ տէրութեան աշխարհներք բաժնեցին քանի մի ընդարձակ վիճակ, որոց մէջ գտուած ազգային տէրութեանց այլ սահման և իշխանութեան չափ որոշեցին։ Այս միջոցին հանգիպեցաւ մեր աշխարհին սահմանն և բաղդն եւս. յետ Արարովու պայմանի նորահաստատ Պարսից Սասանեանց բռնաւորաց, մեր երկրին նուաճման, և Տրդատայ երկարամեայ պանդըխտութեան՝ երբեմն տիրելով Հայրենի աթոռոյն և երբեմն զրկուելով, իր արեւական զինուորութիւնն ի բանալու Հռովմայեցոց, ի մեծ վտանգէ տարեցընելն զԼիկնիոս՝ (որս զնդին մէջ զինուորած էր, և որ յետոյ թշնամացաւ կրօնից փոփոխութեան պատճառաւ), թո՛ղ ինչ որ կ'աւանդուի Գոթաց զէմ՝ և Հուչի վրայ քաջագործութիւններն, այս ամենն պատճառ և իրաւունք տուին Տրդատայ, ոչ միայն իր Հայրենի դաշը ժառանգելու, այլ և պաշտպան ունենալու զՀռովմայեցին՝ ընդզէմ Սասանեանց. և չափաւոր ազատութիւն մի տուին նոքս մեր թագաւորին, բայց տէրութեան սահմաններն ամբողջով որչափ էր բնիկ Մեծ Հայոց, ի բաց առնելով Տիգրանայ տիրացած երկիրները և Փոքր Հայոց գաւառները։ Շատ որոշ կերպով նշանակէ Ալաթանգեղան (ձի) այս իր ստանդ

Հայոց տէրութեան սահմանները, երբ Պր-
 Լուսաւորչի քարոզութեան սահմանները յի-
 շէ. սկսեալ յարեւմտեան կողմէ՝ պատելով
 ի հիւսիս, և դառնալով յարեւմտեան հարաւ՝
 պատելով զհարաւակողմն, և վերանալով յա-
 րեւելակողմն և հիւսիս. « Ի Ստտաղացոց քա-
 « ղաքէն (Փ. և Մ. Հայոց միջոց) մինչեւ առ
 « աշխարհուն Խաղտեաց, մինչեւ առ Կաղար-
 « ջօք (Վրաց սահման), մինչեւ ի սպառ ի սահ-
 « մանս Մաքթաց, մինչեւ ի Դրունս Ալա-
 « նաց, մինչեւ ի սահմանս Կասպից, ի Փայ-
 « տակարան քաղաք արքայութեանն Հայոց.
 « և յԱմրացոց քաղաքէն մինչեւ առ Մծրին
 « քաղաքան, քերէր առ սահմանօքն Ասորոց,
 « առ Կորդիական երկրան, և առ Կորդօք,
 « մինչեւ յամուր երկիրն Մարաց. մինչեւ
 « առ տամրն Մահքրտան ի իւսանին, մինչեւ
 « յԱտրպատական»: Այս սահմանաց մէջ բո-
 վանակին Մեծ Հայոց 15 աշխարհքն՝ ընդ-
 արձակօրէն, որոց կ'իշխէր Տրդատ՝ ազա-
 տարար, իբրեւ դաշնակից Լեոմմայեցոց:

Այս դաշնակցութիւնս տեսեց իբրեւ 15
 կամ 25 տարի, սկսեալ յամի 286, յորում թաւ
 գաւորեց Տրդատ, մինչեւ ի սկիզբն հրովար-
 տակի հալածանաց քրիստոնէից (303), յոր
 ստիպեցաւ Դիոկղետիանոս ի դրդելոյ իրմէ
 աւելի անզգամ կայսերակիցներէն, որոցմէ՝
 քիշ տարի վերջ (305) ինքն այլ զգուելով՝
 հրժարեցաւ ի կայսրութենէն և քաշուեցաւ
 իր հայրենիքը, Դաւթատիս, բանջարներ մշա-
 կելու: Երբ կայսերակիցքն սկսան աւելի բռու-
 նաւորարար տիրել և հալածել զքրիստոնեայս,
 Տրդատ՝ որ արգէն ազգովին քրիստոնեայ էր,
 կտրեց անոնց հետ դաշնակցութեան կապը,
 իր երկրին ազատ տէր եղաւ, բայց հակա-
 ոակութիւն չէր ցուցնէր և որոշուած սահ-
 մաններէն դուրս չէր ելնէր. մինչեւ որ այդ
 հալածիչ կայսերաց մօտագոյնն՝ միանգա-
 մայն և անմտագոյնն, շտապեց զինքն երեւ-
 նալու՝ միանգամայն պաշտպան իր երկրին և
 իր նորընկալ սուրբ հաւատոց քրիստոնէու-
 թեան: Զայս հարկ է հիմայ յիշել՝ թէ ինչ-
 պէս եղաւ, ինչպէս Արշալոյսն քրիստոնէու-
 թեան Հայոց՝ արեգակնապէս սփռելով եղաւ
 Արեւելքն Լուսաւորութեան Հայոց:

Եթէ սոսկ ազգայնոցս՝ Հայոց համար՝ ու-
 զէի շարեւ այս տողերս, գրեթէ ամաչելով

պիտի դադրէի. որոց՝ այնքան ծանօթ համա-
 րիմ իրենց համօրէն լուսաւորութեան սկիզբն
 և պարագայները, որ մեզ իբր անտարան մի
 հարկ է ըլլալ, ինչպէս Ս. Լուսաւորչի վար-
 դապետութիւնն այլ՝ որ Արաթանգեղոսի
 պատմագրութեան կցած՝ Անեսարան Ս. Գրի.
 գործի կուռած է: Կ'ուզեմ այլ հաւատալ՝ թէ
 այնքան մեծ երեւցեր է և է այս լուսաւո-
 րութիւնս Հայոց, որ հեկեղեցական պատմու-
 թեանց սկզբնաբոլոր Եւսեբեայ աչքը՝ կերպով
 մի շլացուցեր է. եթէ օտարոտի իմն է ը-
 ստած, նոյնպէս և օտարոտի պէտք է համարել՝
 իր պատմութեանց մէջ քնաւ շիշեմն Հայաստի՝
 գերբրինակի գիպուածն: Կոյնը պէտք է ըսել
 և իր հետեւող Զոսմենոսի համար, որ և
 Վրաց և ուրիշ ազգաց դարձն ի քրիստոնէու-
 թիւն յիշէ (Բ, 2)՝, բայց զՀայոց՝ ոչ. սակայն
 ուրիշ տեղ մի յիշէ միայն՝ որ Հայք իրենց շը-
 վարնակ ազգերէն առաջ ընդունեցան քրիստո-
 նէութիւն. և թէ՛ յԵրեսնացոց և ի Հայոց առ
 տուածային արանց մտաւ քրիստոնէութիւնն
 ի Պարսկաստան. և զի՝ շատ հին է քրիստո-
 նէութեան մուտքն ի Պարսս, սպա նազդայն
 եւս ի Հայս խոստովանի լոբելայն կամ յայտ-
 նապէս՝ պատմիչն: Եթէ, այդ պատմիչք որ
 այլեւայլ ազգաց քրիստոնէութիւնը պատ-
 մէին՝ ճաննալով զանոնք հպատակ հովեա-
 կան կայսերութեան, իսկ զՀայս միայն ինք-
 նագլուխ տէրութիւն մի, այս պատճառաւ
 թողուցին յիշել. թէ արդեօք շատ զարմա-
 նալի և անծխաւելի հանգամանաց հետ՝ մարդ-
 կօրէն զարմանալի և երկբայելիք այլ լսելով՝
 շուզեցին կամ չկրցան որոշել և աւանդել.
 այլ Հայոց քրիստոնէութեան վրայ քնաւ չէին
 տարակուսեր. և տեսանք արդէն՝ որ նոյն
 ինքն Եւսեբիոս էր յիշող ՎԵհրուժան եպիս-
 կոպոս Հայոց՝ ի կէս Գ դարու:

Թողու՛ք այս ոչ մեզ կարեւոր խնդիրս, և
 անոր հետ մեր պատմաց ւաւանդածին մէջ
 այլ քննադատութեան աւելի կամ պակաս
 ենթակայ նիւթերը. ինչպէս, Տրդատայ կեր-
 պարանաց այլափոխութիւնն միանգամայն և
 բարուց, մեհնեաց կործանման ատեն դիւաց

1. Այս զուլիս պատմութեանն այլ հարագա-
 չի համարուիր՝ այլ եկամուտ:

մարտկերայ փախուսան, Տրդատայ գրեթէ գերակակալ ոյժն, Գրիգորի և Ս. Յակովբայ Մծբնացոյ աղգակնութիւնն, Հովհիմեանց քանի մի դէպքերն, և այլն, որք որքան և կրքնան չափուորապէս մեկնուիլ և ըստ այսմ հաւատալի ըլլալ, սակայն աւելի զարմանալի կ'ըլլայ՝ եթէ բոլոր Աջաթանգեղոսի (որ ի սկզբան՝ յունարէն գրուած է), և մեր Գ. և Ե դարու պատմչաց ըսածներն, զոր Յոյնք և Ատորիք, մինչև Եգիպտացիք (Վ. փոխք) և Եթովպացիք անգամ իրենց Յայտնուորաց մէջ պատմեն, ասոնք անհաւատալի կամ գժուարահաւատալի հրեւան: Արդարեւ Հրաշալի են. և Հրաշալեաց սահման չկայ առ Աստուծոյ. բայց և խոհականութիւնն կրքնայ ընտրել զհրաշալիին ի հրէշաւոյն. Եւ որքան աւելի կամ պակաս Հրաշալի երեւի մեզ կամ օտարաց՝ միւր ազգին քրիստոնէութեան դարձն ի ձեռն Լուսաւորչին, որ կերպով և է. հարկ իսկ է մեզ երկիւղածութեամբ զոհանալ զԱստուծոյ:

Եթէ Տրդատայ անունն Արշակ եղած ըլլայ և Գրիգորի Ստրեհն, Հովհիմեայ այլ այլ կերպ ըստ օտարագրի Յայտնուորաց, չէ ինչ փոյթ. բայց իրական, պատմական և ստոյգ է՝ առջինին մարմնով և մտք գորաւոր և գիւցազնական մէկն ըլլալն, երկրորդին Հայոց ազգին ընդհանրութեան լուսաւորիչ ըլլալն, երրորդին՝ հիանալի փափուկ կապ մի ըլլալն այդ երկուքին միջև. և որ և է նա. յուածքով սխրալի երբեակ մի աստուածային ներգործութեանն ի հաստատութեան հրաւատոց և եկեղեցոյս Հայաստանեայց. որոց բովանդակ զործոց շարքն՝ արդարեւ զիւրացնական, վիպասանական, ողբերգական հանգուցաւոր բան մի է. սակայն բունն և կենդրոնն ստոյգ: Ա՛ր թողունք որ գրեթէ ամէն երկրի քրիստոնէութեան ընդունելութիւնն հրաշալեօք եղած է. և ուր Հրաշք կայ ի կարեւոր դէպս սեփական պատմութեան, արժան է գոհանալ զհրաշագործողին, որ է ինքն Աստուած, որոյ և է իր արարածոյ ձեռք:

Պարզօրէն իսկ պատմական, այլ ստոյգ պատմական պատկերօք զննելով այդ Հայոց Լուսաւորութեան առիթ երբեակը, և իրենց կապակցութիւնն ի լրումն մեծ և սուրբ գործոյն, շատ նշանաւոր և հետաքննի կ'երեւին,

թէ դիպուածքն թէ անձինքն: Ասոնց առաջինն՝ ժամանակաւ, ոչ պակաս և արդեամբ՝ է ամենայն մասամբ Միւծ, ահեզ, երբեմն Գրեցազն և ապա Խոստովանող Քրիստոսի և Ստրք, Թագաւորն Տրդատ: Ի մանկութիւնն՝ փոսնագաց և դժարութեանց մէջ ընկած, մտօք և մարմնով կուռելու յաղթելու ջանացող, Հարկաւ և յօժարութեամբ: Եթէ լոկ մարմնոյ ուժով և յալողութեամբ ըրածներն ըստ աւանդութեանց, նկատուին, հէլլենական հակադէմ և դիւցազանց դասակարգութիւն է. եթէ աննշկուն ոգին և ջանքն՝ իր հօր և իր ազգին տէրութիւնն և թաղը կործելու յօտարաց և պատկուելու, քաղաքագէտ և յաղթող թագաւորաց դասակցի. և եթէ յայսմ մասին կշռուի իր ըրած ծառայութիւնն և օգնականութիւնն հռոմէական ինքնակալութեան, այն Սասանեանց գորաւոր դիմակալութեան, և կայսերաց բազմաւորութեամբ շփոթած ժամանակ, ոչ փոքր երախտաւոր պէտք է ճանչցուի այն զոռոզ տիեզերակալաց, որք իրենց կողմանէ այլ՝ յայսմ գտուեցան երախտագէտ, և փոխադարձ օգնութիւն մատուցին և յալողացին թագաւորութեանը: Իսկ երբ նկատուի իրրեւ քրիստոնեայ և առաջին հանդիսապէս Թագաւոր քրիստոնեայ, և իր ազգը խմբովին քրիստոնէացընելու՝ ձեռնտու Լուսաւորչին, և յորդորող՝ թագաւորական (կամ լաւ եւս ըսելով արդատական) հեղինակութեամբ, յայսմ՝ անհամեմատ է իր արդեւնքն, և արժան է կրկնել մեր մեծ պատմչին (Խորենացոյ Բ, Գ, Բ) ծանրակշիռ տեսութեամբ խօսքը. որ՝ զԼուսաւորիչ նախակարգէ «միայն վկայութեան և առաքելութեանն միճակաւ». անկէ զատ՝ յամենայնի «զուզարան և հաւատարագործ» զՏրդատնա և աւելի եւս քան զնա. «քանզի, խորհելն յազաջ Աստուծոյ և ճգնազգեցիկ լինել՝ զոյգ (է) երկուցունց (Գրիգորի և Տրդատ)». իսկ նուանել (գժողովուրդն համոզել) «հաւանեցուցողականաւ կամ բունաւորաւ «կանա բանի» առաւել էր թագաւորին նորոհ «(քան զքաղցր Գրիգորի). քանզի ըստ հաւատոյն՝ ոչ ինչ կասեցուցանէր զգործն. «այնր աղաքաւ կոչեմ և զսա նախաշաւող «ճանապարհ, և յուսատրոսքանցն մերոց «Հայր Երկրորդ»»: Նոյն դատաստանաւ վճէ

դարձեալ « Բազմափայլ ճառագայթ » . — Երկրորդ նահատակ. և մերոյ Լուսաւորութեանց լուսաւոր վերահացու՝ — Ճշմարիտ քաջատր » , և այնն Եթէ, մարդկօրէն դատելով, Բարդղիմէոսի և Թադէոսի ատեն ըլլար այսպէս Տրդատ մի՛ այն ատենէն կ'ըլլար Հայ ազգն այլ քրիստոնեայ. իսկ եթէ Գրիգորի ատեն ըլլար Տրդատն՝ Գրիգոր այլ մասնական լուսաւոր մի կ'ըլլար Հայոց ոմանց՝ այլ ոչ համօրէն Հայոց : Սակայն, « Ո՞ գիտաց զմիտս « Տեառն. կամ ո՞ եղև նմա խորհրդատու » :

Տրդատ՝ մեր արչակազմի Թագաւորաց անընդհատ 400 տարուան ծանօթ պայազատն էր. իսկ Գրիգոր ո՞վ էր, որ այնպիսի մեծ և հզօր Թագաւոր մի՛ աւելի մեծագոյն գործի գործակից ըլլաւ : Յանկարծօրէն և յօտար աշխարհէ՛ մայրենի ծածկութեանց մէջ կծկած, չի ծնած ճանապարհորդելով՝ կ'արձակուի ի Հայս. կենաց լոյսը կու տեսնէ՛ Հայոց հոգւոց առաջին լուսածագ Թագէի հանգստարանին վրայ . իր հայրն Անակ՝ դաւաճանութեամբ սպաննելով զԹագաւորն Հայոց Խոսրով՝ խաւարցնէ զտէրութիւն և զազգ Հայոց, ի ժամանակի աւնոր յաղթող փայլմանց. արանապէս ինքն այլ կու սպանուի բոլոր ընտանեօքն. իր դատապարտուած մարած կրակէն՝ կայծակ մի միայն Թռչի փախչի Թաքչի յարեմուտս. և յետ երկար տարիներու պէսպէս զիպաց՝ դառնայ կ'ըլլայ Լուսաւորիչ իր հօրը խաւարցուցած աշխարհին. և անոր (Տրդատայ) որ իրաւունք ունէր զինքը շարաշար սպաննելու՝ կ'ըլլայ կենսատու յաւիտենից կենաց, յետ տարեւոր ժամանակաւ՝ առանց իմացընելու ծառայելով իրեն՝ իրբեւ աշխարհիկ պաշտօնեայ : Ի՞նչ զարմանք է այս. ո՞վ մտածեց, ո՞վ հնարեց, ո՞վ կարգաւորեց այս բաներս. — սա մարդկան գործ չէ. հրաշալի է, գործ է Աստուծոյ, անքննելի և անհեցուցիչ, այլ և հոգեզուարճ նախախնամութիւն. որոյ զարմանալի օղակաւոր իմն յաջորդութիւն է՝ Տրդատայ բարեբաղդաբար Թագապետի դարձին ատեն յօտարութենէ՛ ի Հայրենիս, զբունեն զԳրիգոր անծանօթաբար, զօրդի իր հօր սպանչին, և առնուլ իրեն հաւատարիմ և սիրելի պաշտօնեայ. իր ուրախութեանց միանգամայն և մուրուրութեանց մեծահանդէս

խրախճանին՝ անոր յանձնին՝ որ զկարծեցեալ Մայրն Հայոց զԱնահիտ՝ ծիածան ծաղկօք պօսկէ. հիացուցիչ զազունեաց յայտնուիչն. Անակայ որդի Սարգենի՛ (Գրիգորի) քրիստոնեայ հաւատով և դաւանութեամբ կանգնին իր ընտրած ահաւոր տիրով զմտաց, խոստովանիչն, վիճելն, տանջուիչն, և դարձեալ անկարծօրէն գաղտնեաց վերջին քողն այլ բացուելով՝ իմացուիչն ով և որու որդի ըլլան. դատապարտուիչն ի վիրապընկեցութիւն՝ մօտ յԱրտաշատ մայրաքաղաք Թագաւորութեան Հայոց, և երկար տարիներ հօն մեռելատիպ մնալն, իրբեւ կայծ ընդ մոխրով, մինչև դարձաւ մեծագոյն հրաշալեօք յայտնուելով լուսածագին առ հասարակ ի Հայաստան՝ :

Թ

Հուխիսիմանսք.

Մեր քաղաքական պատմութիւնն դարձեալ մթ ըննայ այս միջոցիս : Ազգաթանգրոսի պատմած Տրդատայ շարունակ յաջորդարար տէրութիւնն՝ Թուի անգամ մ'այլ կոտորուած. Երեսէ՛ Սասանեանց Թագաւորն աւելի յաւնողած գտնուի ընդդէմ Հռովմայեացոց. որոց կեսարն Գալերիոս՝ ամօթապարտ կորակոր դարձած և մեքժուած ի Գիտիլետիանոսէ, նորէն Տրդատայ նիցակակցութեամբ և քալութեամբ՝ յաջողի իր կորսնքը կանգնել. մեր երախտաւոր Թագաւորն այլ այնուհետեւ (Իբր 297) անընդհատ 40 տարիէ աւելի այլ Թագաւորէ, ոչ միայն քաղաքական և յաղթականն, այլ և գերագոյն լուսաւորութեան փառօք : — Ի՞նչպէս կ'ըլլայ այս լուսաւորութիւնն. և ի՞նչ լուցկի է որ այն մոխրոյ տակ երկար և ցուրտ տարիներ ծածկուած կայծակը՝ կ'արծարծէ և փայլեցնէ : . . .

Հարցընենք հին Երբողի մի և երգէ մեզ .
« Ի Յիւս արեւու՝ (ի Հայս) արեւ ծագեցաւ մեզ յարեւմտից .

1. Այս շղթայաշար իրաց մէջ պէտք չէ մտնալ և օղակ մի Սալահուէի նահատակն Թէւոզար, զոր առաւ յեշեցինք :

Չամպն՝ արեգական ծածկոյթ՝ Պետրոսեան հողմոյն հաւածեալ.

Օրիորդ մաքուր հարսինն (Հսիսի.) աւետիս տայր փեսաւերին.

Չարթիբ Զուարթռն անոռն (Պրիգոր). ել, գարթո՞ գթմբբեալան ի մեղաց.

Աբի որ նընչեալ ի Քրքի, լուսատու լիցի քեզ՝ Քրիստոս:

Արեամբս ոռոզիմ (ես Հոսիփ.) գերկիր (Հայոց, գու) սերմանեա, մշակ հոգեւոր»:

Հրաւիրենք մեք այլ զհրաւիրող լուսատուութեան մերոյ՝ դարձեալ երկողի բերնով.

«Եկեալ ի դրախտոս կենցաղ, աննկ յըն»

«կարե . . . հարան Քրիստոսի, ընտրեալ ի «րիւրոց, ո՞վ Սուրբ Հսիսիսիմէ. . . Երեւ»

«ցար ծաղիկ գարնայնոյ, անուշահոտ վարդ «կարմրեպիեան, շուշան սուկետիպ. . . գուսար «արքայի, յսկեհոռն պատճենեալ. . . Սա»

«ւստնեալ ըստ քունեաց՝ ելին ի յերկին»

«ընդ քեզ լնկերք քո. մոէք ի տուճար թա»

«քարի՝ ի հարսանխն անսպական, յու»

«բախտութիւն յաւտոնեից»:

Հրաչայի հրաւիրակն Պրիգորի ե իր դաստիարակն Քայիանէ՝ հոռուական կայսերաց ցեղէն կ'ըտտին. Հռիփսիմէ՝ ըստ Ագաթեան գեղոս՝ էր դուստր «նրունն յասուածա»

«պաշտ ե ի թագակալ տոճմէ». ըստ Խոբենացւոյ՝ «ի ծիրանափառ օգոստականացն «ի կայսերական զարմէ»:

Ասոնք հարերաւոր կուսանաց հետ՝ կէս ծածուկ կէս յայսնի՝ ի սահմանս մայրաքաղաքին Հոռովմայ՝ Ս. Պօղոսի հանգստարանին քով, տեսալ մի միաբանակեաց կենօք ճգնէին «յարգեալմանս մի «կուսանաց», ըստ Ագաթեանց.:

Յատուջ քան զմեծ հայածանս Գիողիգետիանոսի, իբրեւ յամի 293, սկսան փնտաւլ գասոնք. ըլլալ Ագաթեանցեղոսի աւանդած՝ Հռիփսիմեայ գե-

ղեցիութիւնը կայսերական թագով պսակելու համար¹, ըլլալ պարզ իր ե ընկերաց հաւատքն անհանգստեալու համար. մայրն Քայիանէ՝ իր տեղը ե կուսանաց բազմութիւնը յանձնէ իր Չոյն կամ Ելզոյն կամ Չիոն քրոջ, զորս՝ կայսրն Նարզել կու տայ, երբ իրենց ընկերաց փախուստը կ'իմացուի². Քայիանեան ե Հռիփսիմէի հետ եօթնասուն ե աւելի ընկերք ե քանի մի քահանայք երթան յօտար երկիրներ. իրենց հետ ընկերանան ե արք հարիւրի շափ, ե երկար տարիներ երկրէ երկիր թափառին: Ո՛ր ե ի՞նչպէս. . . յայտնի չէ սմանն, ե չէ հնար գիտնալ, բայց գոյս՝ որ յարեւելք կ'անցնին ե Քրիստոսի ստօրնութեանց տեղուանքը կ'ողջունեն իբրեւ ուխտաւորք. ապա սրիշ ուխտի տեղուանք Ասորոց կողմերը, ուր որ կամ Քրիստոսի սըրբազան զգեստուց կամ շարչարանաց գործեաց յիշատակ մի կար, կամ Առաքելոց հանգըստարանն ե նշխարք. այսպէս կու գան յԵղեսիա՝ Քրիստոսի գաստառակը կամ անձեռագործ նկարեալ պատկերը պատուելու:

Ըստ այսմ ե երբ ի Գեթսեմանի Ս. Աստուածածին գերեզմանին քով երկար տանն կեցան, իրմէ, կ'ըլէ պատմիչն, պատուելու աւսին երթնան ի կողմանս Հայոց, ե գտնեն ու պատուեն հօն իր փայտեայ պատկերը, քանդակեալ յաւետարանչէն Յովհաննէ, զոր սեսանք ի Բարդղիմէոսէ Առաքելոյ գրուած ի Հոգեաց վանս: Այս այցելութիւնը կամ գալլատուան դէպքը՝ մեր բազմաբեքի խորենացին գոած ե գրած ե աւանձինն, որ պէսպէս վերնագրի ի Ճաւընտիրս, որպէս այս. «Յաղագս Հռիփսիմեանցն, ի ծընարիտ «պատմագրացն Յռանաց գտեալ Մովսիսի Խոբենացւոյ»:

Պատմագրաց զլիւստրն՝ յորմէ օգտուեր է մեր պատմիչն՝ ինքնին յանուա-

րեան հարմարանաց մէջ գտնուեցան նշխարքն, հուսկուեցաւ անունն ե պատիւն, տօնուի ի 10 կամ 13 օգոստոսի:

2. Գեղեցիկ խորհրդածութեամբ կ'ընէ այս բանս՝ մեր պատմիչն. «ԶԹոյնս դառնութեանն «ի նոստ թափեալ՝ արար վկայս Քրիստոսի:

«յործած ոչ եհաս ընթանել ի վարկ մանոս «գեւր ասարիչուհոյն» (Հռիփսիմայ):

1. Որչափ այլ երկրայելէ ե Գիողիգետիանոսի սիրահարիւն ի պատկեր Հռիփսիմէի ե խնդրելն, օտարք այլ պատմեն նման բան մի. այդ կայսեր ի կողմանս Յունաց եղած ասան տեսնելն 13 տարեան զեղեցիկ աշխիւ ի Ֆիլիպպեան անունն, խնդրելն հարսանացնեղ իրենն ե մեր Ժուլեւով՝ շարչարել ե նահատակել զնա. Ժիգարուս սկզբան (1802) Հոռովմայ (Պրիսկիլեան)

Պետնադամբանաց մէջ գտնուեցան նշխարքն, հուսկուեցաւ անունն ե պատիւն, տօնուի ի 10 կամ 13 օգոստոսի: 2. Գեղեցիկ խորհրդածութեամբ կ'ընէ այս բանս՝ մեր պատմիչն. «ԶԹոյնս դառնութեանն «ի նոստ թափեալ՝ արար վկայս Քրիստոսի: «յործած ոչ եհաս ընթանել ի վարկ մանոս «գեւր ասարիչուհոյն» (Հռիփսիմայ):

նէ կ'իմացուի (թէ և այլով մասամբ կե-
նացն, ժամանակին և գրոցն անծանօթ է
մնացեր յետոյ), և կ'ըսէ. « Զստեմարանու-
« թիւնս իմաստնոց գրոց յՆԱՄՂԱՅ՝ յԱՄ-
« սրիկէ՛ իմ ընթերցեալ բազում անգամ,
« գտի զոճ գրոցս, որ ի ճակ գայր պատ-
« մուծեանս մերոյ Հիւսման. յոյժ պիտանի
« և յօգտութիւն մեզ լսի, որ անուն գրոցն
« կոչի Դաւթի Հոսիմայեցոյ զիրս Եկնիսիս-
« տես (Եկեղեցական պատմութիւն). գոր կա-
« մեցեալ իմ թարգմանել և ոչ ժամանեցի,
« մնաց այլում տեղոյ կամ իմաստնոյ ». հե-
տեւեալ խօսքով մ'այլ կարծել տայ՝ թէ Ա-
գաթանգեղոս եւս նոյն գիրքը տեսած և քըն-
նած ըլլայ. որով այն Հեղինակն այլ հնագոյն
կ'ըլլայ՝

Շարայարեւի 2. 2. 2. Ե. Ա. Ե. Ե.



ՔՆՆԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐՈՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ
ՎՐԱՅ:

(D^r. V. ERMONI, DE LA MISSION
DES LAZARISTES, PARIS).

(Շար. տես յէջ 346)

Նոր Կտակարան.

ՄԵՐ ցարգ քննած ինչիքն բնաւ կա-
րեւորութիւն մը շունի Նոր կտակարանի
նկատմամբ, վասն զի ստոր երբայական բնա-
կիրը շունինք. հետեւաբար շննք կրնար քըն-
նել՝ թէ արդեօք Նոր կտակարանի հայերէն
թարգմանութիւնն՝ երբայականի վրայ եղած
է. Սիւայն այսչափ միայն հարցընենն նե-
րելի է, այսինքն, յոյն թէ ասորի բնագիրն
վերագաս տեղին ունի հայերէն թարգմանու-

1. « Prose sequi (Versionem armonam) co-
dicem alexandrinum ». (Thesau. epist., III. p.
204). — զայտ էր յիշէ Le Long-Masch (Bibliot.
Sac., II. I. p. 171). — Նոյն Լաբրուզ՝ հայկա-

թեանս մէջ. բայց առ այժմ՝ այս կէտով պի-
տի չըրարդինք, որովհետեւ ոչ մէկ քննադատ
ենթադրած է՝ որ հայերէն թարգմանութիւնս՝
ասորականէն եղած ըլլայ. այսու հանդերձ,
մեր յետոյ ըսելիքն քիչ շատ ուղղակի պիտի
հաստատէ այդ իրողութիւնը: Առ այժմ՝ հոս
մէջ բերենք միայն մի քանի համառօտ օ-
րինակներ՝ որք կը ցուցընեն յոյն բնագիրն
և հայկական թարգմանութեան մէջ եղած
սերտ յարաբերութիւնը:

ա) Յիսուս բառն յունականի և հայկա-
կանի մէջ նոյնպէս ուղղագրուած է, և անոր
մէջ յ յոյն տառն կ'ենթադրուի: (Օրինակ
իմն. Դիսոս—Յիսուսի (տեղ տեղ):

բ) Մէկ քանի անգամ, հայ թարգմանիչն
չհասկնալով յոյն բառին նշանակութիւնը,
գործածած է գայն ինչպէս որ է յունակա-
նին մէջ, Զոր օրինակ. Μωρδ—Մորոս (Մատթ.
Ե. 22):

գ) Յունականի մէջ գտնուած շատ մը
արմատական բառք՝ նոյն կերպով կը գրա-
նուին հայ բնագիրն մէջ. (Օրինակ իմն.

α) Ἀμήν — Ամէն (տեղ տեղ).
β) Λέγει: αὐτῶ. Ἐφφαθά, ὃ ἐστὶν « δια-
νοεῖσθαι ». — սուէ. Եփփաթա, որ է՝ բա-
ցիր. (Մարկ. 2. 340):

γ) εἰς τὸν κορβανᾶν — ի կորբանն. (Մատթ.
Ի. 6):

δ) Γολγοθᾶ — Գողգոթա. (Անդ. 33).
ε) Ἥλι, ἦλι, λαμὰ σαβαστανί — Էլի, էլի,
լամա սաբաթեանի. (Անդ. 46):

§ 2. Հայկական թարգմանութիւնն՝ աղեքսան-
դրեան ըմպարի վրայ եղած է:

Արդև իսկ Լաբրուզ հաստատեր էր այդ
կէտը, ցուցընելով միանգամայն որ հայկա-
կան թարգմանութիւնն հաւատարմութեամբ
կը հետեւի աղեքսանդրեան օրինակին¹.
Թէպէտ և այս իմաստին մէջ կայ չափազան-
ցութիւն, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, բայց
յիբերեան ճշմարտ և, ինչպէս որ կը հաւատա-

կան թարգմանութիւնը կը կոչէր զշտոյ քարգ-
մանաթեանց, անոր էիչը հաւատարմութեան
և համաձայնութեան համար յոյն բնագրի
հետ: